

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԲԱՐՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՔԱՐԱՑԱԾ ՁԵՎԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԲԱՌԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

ՎԻՎՏՈՐՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կենդանի լեզուն անընդհատ զարգանում է, փոփոխվում են լեզվական տարբեր միավորներ ու համակարգեր, և այդ ամենի հանրագումարում՝ նաև լեզվի բառապաշարը: Այդ գործընթացը կատարվում է տարբեր ձևերով, որոնցից մեկն էլ բառաձևերի (քերականական ձևերի) վերածվելն է ինքնուրույն բառայինների: Այսինքն՝ բառերի (բառայինների) քերականական տարբեր ձևեր քարանում են, այլևս չի գիտակցվում դրանց բառաձև լինելը, և դրանք սկսում են գործածվել որպես ինքնուրույն բառեր:

Էդ. Աղայանը քերականական ձևերի՝ բառերի վերածվելու մասին խոսելիս գրում է. «Իմաստների ստուգաբանական խզման մի տեսակ է քերականական ձևերի քարացումն ու բառացումը, որի հետևանքով բառի որևէ քերականական ձևը, կորցնելով իր քերականական իմաստը, վերածվում է ինքնուրույն բառի և ստանում նոր իմաստ»¹: Հեղինակը բերում է օրինակներ՝ *հավատամք*, *հասցե*, *իրավ*, *իրոք*, *կեցցե* և այլն:

Քարացած բառաձևերի՝ ինքնուրույն բառական միավորներ դառնալու հարցին անդրադարձել են տարբեր լեզվաբաններ, սակայն այդ ճանապարհով առաջացած բառերը խմբավորված ու դասակարգված չեն: Դրանք հիմնականում քննվել են ընդհանուր մոտեցմամբ՝ որպես քերականական քարացած ձևերից առաջացած բառեր: Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քարացած բառաձևերի մեջ առանձնանում են տարբեր խմբեր: Նշենք նաև, որ բառաձևերի քարանալու հետևանքով կարող է փոփոխվել նաև դրանց կազմում եղած ձևայինների արժեքը: Ձևակազմական ձևայինները հիմնականում վերածվում են բառակազմականի: Այս երևույթի վերաբերյալ Մ. Աբեղյանը գրում է. «Հին լեզվի հոլովական և բայական ձևերի մասնիկները մեռնելով՝ մեկ մեկ բառերի մեջ քարացած մնում են, այլևս չզգացվելով իբրև կենդանի բառափոխության ձևական մասեր, այլ իբրև բառակազմության ածանցական մասնիկներ»²: Այս եղանակով են առաջացել ժամանակակից հայերենում գործածվող մի շարք ածանցներ (օրինակ՝ գրաբարյան *ք*

¹ Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 86:

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 234:

հոգնակիակերտը ժամանակակից հայերենում վերջածանցի արժեք ունի, ինչպես՝ *միտք, բարք* և այլն, թեև որոշ դեպքերում գործում է նաև որպես հոգնակիակերտ, ինչպես՝ *գյուղացիք, այլք* և այլն):

Մինչ քարացած բառաձևերի դասակարգմանն անցնելը ցանկանում ենք անդրադառնալ մի խնդրի: Ժամանակակից հայերենի բառապաշարում կան մի շարք բառեր, որոնք առաջացել են գրաբարյան քերականական զանազան ձևերից, սակայն դրանց մի մասը ինքնուրույն բառի արժեք ստացել էր արդեն իսկ գրաբարում, ուստի նման բառերը որպես գլխաբառեր են գրանցված գրաբարի բառապաշարը ներկայացնող բառարաններում: Օրինակ՝ Նոր հայկազյան բառարանում³ որպես գլխաբառ ներկայացված են քարացած հետևյալ բառաձևերը՝ *վերջոյ, ի սկզբանէ, հաւատաւք*, որոնք գործածվում են նաև ժամանակակից հայերենում: *Վերջոյ* ձևը գրաբարում *վերջ* բառի սեռական-տրական հոլովաձևն է, բայց կա նաև *վերջոյ*՝ որպես մակբայ, որը հիմնականում գործածվում է *ի նախդիրի* հետ. բառարանում որպես գլխաբառ ներկայացված է առանց նախդիրի: *Ի սկզբանէ* ձևը գրաբարում *սկիզբ* բառի հոլովաձևն է, բայց կա նաև արդեն որպես մակբայ: Նոր հայկազյան բառարանում *ի սկզբանէ* ձևը (նախդիրով) բերվում է որպես գլխաբառ, թեև հղում կա *սկիզբ* բառի հոդվածին: *Հավատաւք*-ը գրաբարում *հաւատաւ* բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի առաջին դեմքի ձևն է, բայց գործածվել է նաև ինքնուրույն բառի արժեքով և նշված բառարանում *հաւատաւ*-ի բառահոդվածում նշվում է առանձին: Գրաբարյան *խելք* անեզական գոյականի գործիական հոլովաձևից՝ *խելաւք*, դեռևս գրաբարյան շրջանում առաջացել է *խելոք* ածականը (մակբայը), որը նշված բառարանում *խելք*-ի բառահոդվածում նշվում է առանձին: Իսկ, օրինակ, ժամանակակից հայերենում գործածվող *հասցե, շնորհիվ* բառերը Նոր հայկազյան բառարանում որպես գլխաբառեր չկան, այսինքն՝ դրանք գրաբարում դեռ ինքնուրույն բառի արժեք չէին ստացել, և բառարանի հեղինակները դրանք բառաձևեր են համարել:

Քերականական քարացած ձևերից ծագած այս երկու խմբի բառերն անհրաժեշտ է տարբերակել և առանձին քննել, քանի որ դրանց քարացումը և ինքնուրույն բառի արժեք ստանալը իրականացել են լեզվի զարգացման տարբեր փուլերում: Փաստորեն առաջին խմբի բառերն աշխարհաբարին են փոխանցվել այնպես, ինչպես գրաբարի մյուս բառերը, որոնք համարվում են ընդհանուր հայերեն բառեր: Գ. Սևակը գրաբարից աշխարհաբարին անցնելու ընթացքի մասին գրում է. «Գրաբար բառերը սկզբնական շրջանում թե՛ ինքնաբերաբար ու անգիտակցաբար և թե՛ գիտակցաբար պետք է մուծվեին աշխարհաբարի մեջ. ինքնաբերաբար ու անգիտակցաբար՝ որովհետև գրաբարին ընտելացած մարդը ամեն բոլոր չէր կարող իրեն հաշիվ տալ, թե իր գործածած

³ Տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Միրամէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., 1979-1981:

որ բառն է գրաբար, որը՝ աշխարհաբար, ինչպես այդ հաճախ է պատահում երկլեզվության պայմաններում»⁴:

Այսպիսով՝ գրաբարյան քերականական ձևերի քարացումից առաջացած բառերը, որոնք գործածվում են ժամանակակից հայերենում, ձևավորման ժամանակաշրջանի առումով հնարավոր է բաժանել երկու խմբի՝ բառաձևեր, որոնք քարանալով ինքնուրույն բառերի են վերածվել դեռևս գրաբարում և որպես այդպիսիք անցել աշխարհաբարին, և բառաձևեր, որոնք ինքնուրույն բառի արժեք ստացել են վաղ աշխարհաբարի փուլում, երբ դադարել են գիտակցվել որպես քերականական ձևեր:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քերականական ձևերի քարացումով բառերի առաջացման գործընթացը հիմնականում կատարվել է երկու ձևով:

1) Գործածական է մնացել նաև ելակետային «մայր» բառը (բառույթը), որի քերականական ձևը (կամ ձևերը) վերածվել է ինքնուրույն բառի (բառերի):

2) Ելակետային բառը դադարել է գործածվելուց, բայց նրա քարացած ձևը (կամ ձևերը) դարձել է ինքնուրույն բառ (բառեր):

Քերականական ձևերի քարացումով բառաստեղծման այսպիսի ընթացքում կարող են կատարվել նաև խոսքիմասային մի շարք անցումներ, որոնք կատարվել են որոշակի ձևերով: Անկախ նրանից, թե քերականական քարացած ձևերից առաջացած բառերի «մայր» բառը գործածական է մնացել, թե՞ ոչ, կարելի է առանձնացնել հետևյալ խոսքիմասային հարաբերության խմբերը:

Ա) Հնարավոր է, որ բառաձևի խոսքիմասային պատկանելությունը չփոխվի: Նման բառաձևի այսպիսի օրինակ է բերում Ա. Մուրվալյանը: Նա գրում է. «Գրաբարում *նետ* բառից կազմվել է *նետել* բայը, որ նշանակել է կոնկրետ «նետ արձակել»: Հետագայում կատարվում է իմաստի մթազնում և *նետել* բայի մեջ արդի հայերենում այլևս չի զգացվում *նետ* բառի գաղափարը, թեև մնում է արձակելու իմաստը ոչ թե կոնկրետ նետի, այլ ընդհանրապես որևէ բանի և նշանակում է առհասարակ որևէ բան «արձակել, զցել, շարտել»⁵:

Հավթ-ը, որը գրաբարում *հալ* (թոչուն, նաև թոչունի տեսակ) գոյականի հոգնակին է, աշխարհաբարում ինքնուրույն բառի արժեքով է գործածվում, հոգնակի է ստանում (*հավթեր*) և դարձյալ գոյական է, իսկ *հալ* բառը պահպանել է թոչունի մեկ տեսակի (միայն էգի) իմաստը: Այսինքն՝ աշխարհաբարում որպես ինքնուրույն բառեր (նաև իմաստափոխված) պահպանվել են թե՛ «մայր» բառերը, թե՛ նրանց բառաձևերը, սակայն նրանց խոսքիմասային պատկանելությունը չի փոխվել:

Բ) Հնարավոր է, որ ինքնուրույն բառերի վերածված քերականա-

⁴ Գ. Մեակ, Ժամանակակից հայոց լեզվի դարնթաց, Եր., 2009, էջ 117:

⁵ Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, էջ 115:

կան ձևերից ոչ բոլորը ունենան «մայր» բառի խոսքիմասային պատկանելությունը: Օրինակ՝ *մասն* գոյականի գրաբարյան տարբեր հոլովածներ, ինչպես նաև հոգնակին տարբեր խոսքի մասերի են վերածվել, սեռականը (*մասին*) վերածվել է կապի, *մասամբ* գործիական հոլովածը՝ մակբայի, իսկ հոգնակի ուղղականը (*մասունք*) պահպանել է խոսքիմասային պատկանելությունը, թեև փոխվել է բառիմաստը: Այս բառաձևերն ինքնուրույն բառի արժեք սկսել էին ստանալ արդեն գրաբարում, և Նոր հայկազյան բառարանում *մասն* բառի հոդվածի մեջ դրանք առանձնացվում են: *Գուցե* վերաբերականը գրաբարյան *գոլ* բայի ստորադասական երկրորդ ապառնու քարացած ձևից է ծագում: Այդ բայը գործածությունից դուրս է եկել, իսկ նրա խոնարհված ձևը ժամանակակից հայերենում գործածվում է որպես վերաբերական:

Գ) Հնարավոր է, որ ինքնուրույն բառի վերածված բառաձևի (բառաձևերի) խոսքիմասային պատկանելությունը փոխվի: Օրինակ գրաբարյան *բարի* ածականի հոգնակի գործիական հոլովածից՝ *բարեալ*, առաջացել է ժամանակակից հայերենի *բարև* գոյականը. փոխվել են և՛ խոսքի մասը, և՛ իմաստը: Գրաբարյան *սիրել* դերբայը խոսքիմասային նույն պատկանելությամբ և նույն իմաստով գործածվում է նաև աշխարհաբարում, սակայն նրա անցյալ դերբայի ձևը վերածվել է գոյականի՝ *սիրեցյալ* (*սիրեցեալ*), և ժամանակակից հայերենում գործածվում է *սիրած անձ* իմաստով:

Ինչպես տեսնում ենք, քարացած բառաձևերից առաջացած բառերի դեպքում խոսքիմասային պատկանելության պահպանման առումով երեք հիմնական խումբ է առանձնանում. խոսքիմասային պատկանելությունը *պահպանած*, *չպահպանած* և *մասամբ պահպանած*՝ անկախ նրանից շարունակում է գործածվել «մայր» բառը, թե՛ ոչ: Նշենք նաև, որ խոսքիմասային պատկանելության մասամբ պահպանումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մեկ բառի քերականական մեկից ավելի ձևեր են վերածվում ինքնուրույն բառերի:

Քերականական ձևավորման առումով հնարավոր է առանձնացնել հետևյալ խմբերը՝ *հոլովածներից առաջացած*, *նախդիրի և հոլովածների միացումով առաջացած*, *հոգնակի ձևերից առաջացած*, *դերբայներից առաջացած* և *խոնարհման ձևերից առաջացած*:

1. Հոլովածներից առաջացած բառեր:

Առթիվ, *շնորհիվ* - գրաբարում եղել են գոյականի (*առիթ*, *շնորհ*) եզակի թվով գործիական հոլովածներ, ժամանակակից հայերենում վերածվել են կապերի:

Հնուց - գրաբարում եղել է *հին* ածականի հոգնակի սեռականտրական հոլովածը, այսինքն՝ *հների*. Ժամանակակից հայերենում կիրառվում է իբրև ժամանակի մակբայ. նշանակում է *հին ժամանակներից*:

Դիտմամբ - գրաբարում եղել է *դիտել* անորոշ դերբայի գործիա-

կան հոլովաձև, ժամանակակից հայերենում վերածվել է ձևի մակբայի:

Դիմաց - գրաբարում եղել է *դեմք* բառի հոգնակի սեռական-տրական հոլովաձևը, ժամանակակից հայերենում վերածվել է կապի:

Ցավոք - գրաբարում եղել է *ցավ* գոյականի հոգնակի թվի գործիական հոլովաձևը, ժամանակակից հայերենում գործածվում է որպես վերաբերական:

Մաս, մասին, մասամբ, մասունք - *մասն* գոյականի գրաբարյան տարբեր հոլովաձևեր տարբեր խոսքի մասերի են վերածվել: Ուղիղ ձևը բառավերջի *ն*-ի կորստով պահպանվել է հիմնականում նույն իմաստով (իմաստի որոշ ընդարձակմամբ): Սեռական-տրական հոլովաձևը (*մասին*) վերածվել է կապի, որի վերաբերյալ Մ. Աբեղյանը գրում է. «Մասին բառը, որ ծագած է գրաբարի *ի մասին* ներգոյականից, այժմ արդեն գրեթե հետադրություն է դարձած. բայց իբրև գոյական դեռ առնում է սեռական կամ տրական խնդիր...»⁶: Գործիական հոլովաձևը (*մասամբ*) վերածվել է մակբայի, հոգնակի ուղղական հոլովաձևը (*մասունք*) պահպանել է խոսքիմասային պատկանելությունը՝ գոյական, սակայն փոխել է իմաստը:

Կենաց - գրաբարյան *կեանք* անեզական գոյականի սեռական-տրական հոլովաձև է. պահպանել է խոսքիմասային պատկանելությունը՝ փոխելով իմաստը. գրաբարում նշանակել է *կյանքի* կամ *կյանքերի*, այժմ նշանակում է կյանքի և առողջության բարեմաղթություն:

Կամաց - գրաբարյան *կամք* անեզական գոյականի սեռական-տրական հոլովաձևն է: Վերածվել է մակբայի:

Իրավ (իրաւ), իրոք (իրաւք) - երկուսն էլ *իր* գոյականի հոլովաձևերից են ծագում: Առաջինը *իր* գոյականի եզակի թվի գործիական հոլովաձևն է, երկրորդը՝ հոգնակի հոլովաձևը: Գրաբարում այս հոլովաձևերը կիրառվել են նաև իբրև վերաբերականներ, ժամանակակից հայերենում դրանք կիրառելի են միայն որպես վերաբերականներ:

Վաղուց - գրաբարյան *վաղ* մակբայն է, որը ենթարկվել է *ու* հոլովման. ժամանակակից հայերենում պահպանել է խոսքիմասային պատկանելությունը՝ մակբայ:

Հարկավ (հարկաւ) - գրաբարում եղել է *հարկ* գոյականի գործիական հոլովաձև. ժամանակակից հայերենում կիրառվում է վերաբերականի արժեքով՝ որպես հնարանություն:

Հավաստյավ (հաւաստեաւ) - *հավաստի* ածականի եզակի գործիական հոլովաձևն է, որն այժմ ձեռք է բերել ինքնուրույն վերաբերականի կամ մակբայի արժեք:

Խստիվ (խստիւ) - *խիստ* ածականի եզակի գործիական հոլովաձև է, գրաբարում հոլովված ձևով կիրառվել է նաև իբրև մակբայ. ժամանակակից հայերենում մակբայ է:

⁶ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 481:

2. Նախդիրով և հոլովաձևով կազմված բառեր:

Այս ճանապարհով կազմված բառերը հատկապես շատ են մակբայների մեջ: Ինչպես նշում է Մ. Ասատրյանը. «Մակբայների մի զգալի մասն առաջանում է գրաբարյան կամ ուղղակի հին հոլովական ձևերից և նախդիրով կապակցություններից, ինչպես՝ *վաղուց, հնուց, մանկուց, փոքրուց, այսուհետև, այնուհետև, արդեն, արդյոք, հավաստյալ, հազիվ, ի բնե, ի սրտե, ի վերջո, ի մտոտ, ի տես, ի ցույց, ի սպաս, ցմահ ...*»⁷: Հավելենք, որ այդպիսի բառեր շատ կան նաև կապերի ու վերաբերականների շարքում: Քանի որ քարացած հոլովաձևերից ծագած բառերի մասին արդեն խոսեցինք, անդրադառնանք նախդիրով կապակցություններից առաջացած բառերին:

Հանուն (ի անուն – յանուն) – անուն բառի եզակի հայցական հոլովաձևը գրաբարյան *ի* նախդիրով: Եղել է գոյական, ժամանակակից հայերենում վերածվել է կապի: Նմանատիպ կազմություն ունի *hoqnu* բառը (*ի oqnu – joqnu – hoqnu*):

Հանձին – գրաբարյան *անձն* գոյականի սեռական-տրական հոլովաձևը *ի* նախդիրով, որը գործածվել է ներգոյականի իմաստով՝ *ի+անձին* (կամ հոգնակին՝ *ի+անձին+ս – հանձին*): Ժամանակակից հայերենում գործածվում է կապի արժեքով:

Առանձին – գրաբարյան *անձն* գոյականի սեռական-տրական հոլովաձևը *առ* նախդիրով:

Ի դեմս – դեմք բառի հայցականը՝ գրաբարյան *ի* նախդիրով. ժամանակակից հայերենում վերածվել է կապի:

Իհարկե (ի հարկե) – գրաբարում *հարկ* գոյականի եզակի թվի բացառական հոլովաձևն է եղել, ունեցել է նաև մակբայական իմաստ. ժամանակակից հայերենում գործածվում է միայն որպես մակբայ:

Ի սրտե (ի սրտե) – գրաբարում եղել է *սիրտ* գոյականի բացառական հոլովաձևը. ժամանակակից հայերենում վերածվել է ձևի մակբայի:

Ի ցույց – գրաբարում կա *ցոյց* բառը իբրև գոյական: *Ի ցոյց* նախդիրով հայցականը ներգոյականի իմաստով ժամանակակից հայերենում կիրառվում է մակբայի գործառույթով:

Ցերեկ – կազմված է *ց* նախդիրից և *երեկո* գոյականից (գրաբարում եղել է նաև *ցերեակ* տարբերակը):

3. Հոգնակի ձևերից առաջացած բառեր:

Հավք – ինչպես նշվել է, գրաբարում *հաւ* նշանակել է ընդհանրապես թռչուն, ինչպես նաև թռչունի մի տեսակ: Հոգնակին՝ *հավք (հաւք)*, ժամանակակից հայերենում գործածվում է առհասարակ թռչուն նշանակությամբ, իսկ եզակին՝ *հավ (հաւ)*, թռչունի տեսակի (եգի) անվանում է: Ինքնուրույն բառի վերածված հոգնակի ձևը ժամանակակից

⁷ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2004, էջ 341:

հայերենում եզակիի իմաստ ունի, և անհրաժեշտության դեպքում կազմվում է նրա հոգնակի թիվը՝ *հավքեր*:

Գիրք - գրաբարյան *գիր* գոյականի հոգնակի թվի ուղղական հոլովածն է, որը վերածվել է ինքնուրույն բառի:

Դաշինք – *դաշն* գոյականի հոգնակի ուղղականից՝ *դաշինք*:

Պաշտամունք - գրաբարի *պաշտոն* (*պաշտոն*) բառի հոգնակի թվի ուղղական հոլովածն է:

4. Դերբայներից առաջացած բառեր:

Առաքյալ - գրաբարի անցյալ դերբայը աշխարհաբարում հիմնականում դարձել է վաղակատար կամ հարակատար, սակայն որոշ ձևեր քարանալով վերածվել են ինքնուրույն բառերի. *առաքյալ* (*առաքեալ*) անցյալ դերբայը ժամանակակից հայերենում վերածվել է գոյականի:

Սիրեցյալ – նույնպես առաջացել է գրաբարյան անցյալ դերբայից (*սիրեցեալ*), որը ժամանակակից հայերենում գոյական է:

Ննջեցյալ – դարձյալ առաջացել է գրաբարի անցյալ դերբայից: Այս ճանապարհով են առաջացել մի շարք գոյականներ, ածականներ և մակբայներ *հեծյալ*, *անցյալ*, *երդվյալ*, *սսռուցյալ*, *մեռյալ*, *կատարյալ*, *դարձյալ* և այլն:

5. Խոնարհման ձևերից առաջացած բառեր:

Ասեւ - գրաբարի *ասել* բայի՝ սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի 2-րդ դեմքի ձևն է, որը ժամանակակից հայերենում գործածվում է որպես վերաբերական կամ շաղկապ:

Կարծեւ, *կարծես* - գրաբարում եղել են *կարծել* բայի դիմավոր ձևեր՝ սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի թվի 1-ին և 2-րդ դեմքեր: Այժմ գործածվում են որպես վերաբերականներ (*կարծեսը*՝ նաև որպես շաղկապ):

Կեցցե, *կեցցես* – առաջինը՝ գրաբարյան *կեալ* (ապրել) բայի ստորադասական եղանակի երկրորդ ապառնի ժամանակի եզակի 3-րդ դեմքը, *կեցցես*-ը՝ 2-րդ դեմքի ձևը:

Հասցե – գրաբարյան *հասանել* բայի ստորադասական եղանակի երկրորդ ապառնու եզակի երրորդ դեմքի ձևն է, որը նշանակել է *հասնի*, *կհասնի*, *պիտի հասնի*. այժմ վերածվել է գոյականի:

Դիցուք - գրաբարում եղել է *դնել* բայի ստորադասական եղանակի երկրորդ ապառնու հոգնակի թվի 1-ին դեմքը. նշանակել է *դնենք*, *կդնենք*, *պիտի դնենք*. Ժամանակակից հայերենում վերաբերականի արժեք ունի:

Գուցե - եղել է գրաբարյան *գուլ* բայի ստորադասական եղանակի երկրորդ ապառնու եզակի 3-րդ դեմքը, կիրառվել է նաև որպես մակբայ: Ժամանակակից հայերենում վերաբերականի արժեք ունի:

Ինչպես տեսնում ենք, քերականական ձևերի քարացումով առաջացել են բազմաթիվ բառեր, որոնք գործածվում են ժամանակակից հայերենում: Դրանք բազմազան հատկանիշներ ունեն, և այդ բառերը

հնարավոր է խմբավորել ըստ տարբեր հատկանիշների: Մեր նպատակը առաջին հերթին ոչ թե քերականական քարացած ձևերից առաջացած բոլոր բառերը ներկայացնելն էր, այլ այդ բառերը որոշակի չափանիշներով խմբավորելն ու դասակարգելը: Խմբավորում կատարեցինք հետևյալ հատկանիշներով. գործածակա ն է մնացել «մայր» բառը, թե ոչ, քարացած բառաձևերը պահպանե՞լ են «մայր» բառի խոսքիմասային պատկանելությունը (անկախ «մայր» բառի գործածական լինելուց), քերականական ո՞ր ձևի քարացումից են առաջացել բառերը:

Բանալի բառեր - գրաբար, ժամանակակից հայոց լեզու, գոյական, ածական, մակբայ, քերականական ձևեր, խոսքի մաս, բառապաշար

ВИКТОРИЯ МУРАДЯН – Классификация слов, образованных на основе укоренившихся грамматических форм древнеармянского языка. – В статье представлены слова, используемые в современном языке, которые произошли на основе форм древнеармянского языка. Эти слова сгруппированы по различным признакам. Представлены изменения морфологической принадлежности данных слов. Цель статьи не в том, чтобы выявить все слова с укоренившимися формами, а в размещении таких слов в определённые группы. Группирование происходит по следующим признакам: используется ли (и насколько часто) исходное «пра-слово» с укоренившейся формой, сохраняет ли принадлежность к той или иной части речи, из какой укоренившейся формы произошло слово.

Ключевые слова: грабар, современный армянский язык, существительное, прилагательное, наречие, грамматические формы, часть речи, лексика

VIKTORIYA MURADYAN – The Classification of the Words Derived from the Old Armenian Inflexible Grammatical Structures. – The article presents a number of words used in Modern Armenian which were originated from the fixed grammatical structures of Old Armenian. Those words are grouped according to different criteria. The changes of the words that belong to different parts of speech are presented here. Our aim is not only to present all the words originated from the inflexible grammatical forms but to classify and group them according to some criteria. The act of forming the groups is done according to the following characteristics: whether or not the “mother” word is out of use; the “mother” word has remained the same part of speech without changing its meaning in the inflexible forms of the words; which inflexible forms these words have been originated from.

Key words: Grabar, Modern Armenian language, noun, adjective, adverb, grammatical forms, part of speech, lexicon

Ներկայացվել է՝ 03.09.2019

Գրախոսվել է՝ 23.09.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.06.2019